ՓԱՍՏԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՍԱՌԵՑՈՒՄ

Թարմացվել է 2020 թվականի Օգոստոսի 26-ին

Վարձավճարի սառեցումը ո՞ւմ է վերաբերում:

Արտակարգ Հրամանը վերաբերում է Գլենդելի վարձակալվող բոլոր բնակելի տներին, բացառությամբ 1995 թ. Փետրվարի 1-ից հետո կառուցված բնակարանների, բնակելի համալիրներում անհատների սեփականությունների (քոնդոմինիում) եւ առանձնատների: Այն վերաբերում է նաեւ սեփական տներին կից բնակելի կառույցներին եւ հյուրանոցային այն սենյակներին, որոնք վարձակալվում երկար ժամանակով:

Որքա՞ն է ուժի մեջ լինելու վարձավճարի սառեցումը:

Վարձավճարի սառեցումն ուժի մեջ է 2020թ.-ի Մարտի 24-ից, մինչեւ արտակարգ հրամանի ավարտը, որն այս պահի դրությամբ տեւելու է մինչեւ 2020 թվականի Սեպտեմբերի 30-ը, եթե չերկարաձգվի:

Եթե տանտերը վարձի բարձրացման մասին ծանուցում է տվել մինչեւ վարձավճարների սառեցումը, բայց որն ուժի մեջ է մտնում 2020թ. Ապրիլի 1-ից, արդյո՞ք վարձակալը պարտավոր է վճարել ավելացված գումարը:

Ոչ, վարձակալը կարող է շարունակել վճարել այն վարձավճարը, ինչը վճարում էր 2020 թվականի Մարտի 24-ին: Վարձավճարների բարձրացումը 2020 թվականի Ապրիլի 1-ից անվավեր է ճանաչվում, եւ տանտերը պետք է նոր ծանուցագիր ներկայացնի արտակարգ իրավիճակի ավարտից հետո:

Կարո՞ղ է տանտերը ծանուցել վարձավճարի բարձրացման մասին, եթե բարձրացումն ուժի մեջ է մտնում Արտակարգ Հրամանի ավարտից հետո:

Ո՛չ, տանտերը չի կարող վարձավճարի բարձրացման մասին ծանուցում տալ վարձի սառեցման ժամանակահատվածում, նույնիսկ եթե բարձրացման ամսաթիվը արտակարգ դրության ժամկետի ավարտից հետո է: Տանտերը պետք է սպասի մինչեւ արտակարգ իրավիճակի ավարտը՝ հրապարակելու օրինական եւ պատշաճ կերպով պատրաստված վարձավճարի բարձրացման ծանուցում:

Եթե տանտերը վարձավճարի բարձրացման մասին հայտարարել է մինչեւ 2020 թ.-ի Մարտի 24-ը, եւ այն ուժի մեջ է մտնում արտակարգ իրավիճակի ավարտից հետո, այս դեպքում արդյո՞ք վարձի բարձրացումը վավեր է համարվում:

Ոչ, տանտերը պետք է վերահիրապարակի վարձավճարի ավելացումը Արտակարգ Հրամանի ժամկետի ավարտից հետո:

Պե՞տք է շարունակեմ վճարել վարձը COVID-19 արտակարգ հրամանի ժամանակահատվածում:

Այո, եթե կարող եք, պետք է վճարեք այն վարձավճարը, որը պարտավոր եք: Այնուամենայնիվ, եթե դուք չեք կարողանում վճարել Ձեր վարձը COVID-19ով պայմանավորված խնդիրների պատճառով, ապա կարող եք հետաձգել վճարել ձեր վարձը(երը) առավելագույնը 12 ամիս ժամկետով, Արտակարգ հրամանի՝ Վտարման Հետաձգման կետի պահանջներին համապատասխան, որն առնչվում է վարձավճարը չվճարելու հարցերին: Վարձակալը պարտավոր է տասներկուամսյա մարման ժամկետի յուրաքանչյուր երեք (3) ամսվա վերջում վճարել մարվող վարձի առնվազն 25%-ը, եթե տանտերը եւ վարձակալը համաձայնության չեն գալիս մարման այլ պայմանների շուրջ: